ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԱՐՍԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1991-2005ԹԹ.)

20–ՐԴ դարի վերջին տասնամյակի պատմությունը աչքի է ընկնում իրադարձությունների զարգացման գլխապտույտ արագությամբ: Տվյալ պարագայում այն ունի նաև ԽՍՀՄ–ի փլուզումից հետո եղած հասարակական-քաղաքական փոփոխությունները ուսումնասիրելու նշանակություն: Առաջ անցնելով նշենք, որ դրանք իրենց արձագանքներն են գտնում նաև արդի հասարակական զարգացումների մեջ: Ռուսաստանի Դաշնությունը քաղաքական համակարգի արդի շրջանի ուսումնասիրումը կարևորվում է ինչպես պատմական անցյալի օբյեկտիվ գնահատման, այնպես էլ այսօրվա հասարակական-քաղաքական ձեռքբերումների արժևորման տեսանկյունից, որոնք իրենց արտացոլումն են գտել Ռուսաստանի պատմության արդի շրջանում:

Ներկայումս քաղաքական համակարգի ուսումնասիրությունը ավելի շատ վերապահվում է քաղաքագիտությանը, սակայն տվյալ պարագայում օբյեկտիվորեն պետք է արձանագրենք, որ սույն խնդրի լուսաբանումը առանց պատմական հիմնավոր գիտահետազոտական ուսումնասիրության դժվար է պատկերացնել:

Քաղաքագիտության ձևավորված ուսումնասիրության արդեն ավանդական դարձած մեթոդների կիրառման ընթացքում, կամա թե ակամա, ուշադրությունից դուրս են մնում մի շարք խնդիրներ, իսկ թեմայի զուտ մասնագիտական սահմանափակումը թույլ չի տալիս ամբողջացնել ժամանակաշրջանը և վեր հանել պատմական օրինաչափությունների այն կառուցվածքը, որը տեղ է գտնում այս կամ այն շրջանի ուսումնասիրության ընթացքում: Ուստի ընդունելով յուրաքանչյուր պետության և նրանում ապրող ժողովրդի համար առանցքային նշանակություն ունեցող քաղաքական համակարգի զարգացումը, տեղին ենք համարում անդրադառնալ հարցին պատմագիտության չափորոշիչներով: Ռուսաստանի Դաշնության քաղաքական համակարգին անդրադառնալիս պետք նկատի ունենալ երկու հանգամանք.

1. Ռուսաստանի Դաշնությունը իր տարածքային և էթնիկական բաղադրիչը հիմնականում ժառանգել է սկզբում ցարական Ռուսաստանից, իսկ այնուհետև ԽՍՀՄ կազմում ՌԽՖՍՀ-ից, որոնցից յուրաքանչյուրը իր ազդեցությունն է թողել ինչպես այդ պետության քաղաքական մտածողության և մշակույթի, այնպես էլ նրա պետական համակարգի ձևավորման վրա:

2. 20-րդ դարի վերջին տասնամայակում ԽՍՀՄ-ում տեղ գտած զարգացումների լրջությունը որոշվում էր Ռուսաստանի ներքին հասարակական ակտիվությամբ, որը նրան դարձնում էր քաղաքական իրադարձությունների կիզակենտրոն:

Նշված երկու դրույթները հաստատվում է հատկապես 1990-ականներին տեղ գտած միջպետական հարաբերություններով՝ մինչև 1991թ ԽՍՀՄ երկրների միջև, իսկ 1991թ -ից՝ ԱՊՀ շրջանակներում:

Խոսելով Ռուսաստանի արդի քաղաքական համակարգի ձևավորման մասին անհնար է շրջանցել ԽՍՀՄ վերջին վարչակազմի վերափոխումները թեկուզև այն պարզ պատճառով, որ նշված շրջանի կայացման համար դա ունեցավ հիմնաքարային նշանակություն: 1985թ իշխանության եկած Մ. Գորբաչովի համար պարզ էր դարձել այն խնդիրների կենսական նշանակությունը, որը հետագայում պետք է տեղ գտնեին «Վերակառուցման» քաղաքական կուրսի մեջ: Ներկայումս շատ են հնչում քննադատական ելույթներ ուղղված այդ վերափոխումներին: Սակայն ակնհայտ է մեկ օբյեկտիվ ճշմարտություն ևս՝ Գորբաչովյան «Վերակառուցման» կուրսի չիրականացմամբ 70 տարիների ընթացքում կուտակված սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և ազգային հիմնախնդիրները ինքնին չէին վերանա: Դա էր ցույց տալիս նախորդ վարչակազմերի սոսկ լոզունգային անգործությունը, դա էր հուշում սթափ և իրատես հայացքը: Այլ հարց է, թե որքա՞ն հաջողվեց նրանց իրականացնել այն:

Այնուհանդերձ, պետք է ընդունել, որ «Վերակառուցման» կուրսը լայն հասարակայնությանը տվեց մինչ այդ խորհրդային իրականության համար աննախադեպ ազատություններ ու հրապարակայնություն և դարձավ այն նպաստավոր պայմաններից մեկը, որի արդյունքում զարգացան ժողովրդավարական ավանդույթները և այլ ազատություններ:

ԽՍՀՄ փլուզումը, Ռուսաստանի և խորհրդային մյուս հանրապետությունների անկախացումը պետք է դիտարկել մեկ գործընթացի մեջ: «Վերակառուցումը» տվյալ պայմաններում հասարակական արագացուցիչի դեր կատարեց, խթանելով իրադարձությունների ընթացքը, որին պատրաստ չէին ինչպես կոմունիստական ղեկավարությունը, այնպես էլ հասարակական լայն շրջանները: Առաջինների համար դա իշխանական մենաշնորհի կորուստ էր, մյուսների համար սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական (որոշ դեպքերում նաև ազգային) ցնցումների նոր փուլ:

Ռուսաստանի Դաշնության քաղաքական համակարգի զարգացման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ նրան նախորդած քաղաքական համակարգի յուրահատկությունները: Դրանք ունեն երկու նկատառում՝

1. Ֆիքսել և տեսանելի դարձնել հաջորդող փոփոխությունները հասարակական-քաղաքական կյանքում:

2. Ժամանակի որևէ հատվածում համեմատել և զուգահեռներ անցկացնել դրանց միջև եղած որակական հատկանիշների միջև:

Նման մոտեցում հատկապես արդարացված է արդի շրջանին վերաբերվող ուսումնասիրությունների դեպքում, երբ հետազոտողը շրջապատված է ամենօրյա իրադարձությունների տեղեկատվական հեղեղով:

Ցարական Ռուսաստանի և խորհրդային իրականության միջև զուգահեռներ անցկացնելու տեսանկյունից կարելի է արձանագրել հետևյալ փոփոխությունները՝ երկրի ղեկը և առաջնային նշանակության հարցերը նորից գտնվում էր բյուրոկրատական ավագանու ձեռքին, սակայն այս անգամ ստալինյան: Արդյունքում հասարակական հարաբերությունների զարգացման ոլորտում առաջացան նոր խոչընդոտներ: Անշուշտ սխալ է ասել, որ ցարիզմը ավելի լավ պայմաններ էր ստեղծել: Ոչ, սակայն այստեղ էլ մենք տեսնում ենք անվերջ հալածանքներ, բռնաճնշումներ ու հազարավոր աշխատանքային ճամբարներ: Եվ նորից վերադառնալով քաղաքական համակարգի այս զորանոցային իրականության պատճառներին, ստիպված ենք արձանագրել, որ այն սոցիալական հենարանը կամ ներուժը, որին չէր տրվել իրավունք սեփական հարցերի բարձրացման համար, իր ինքնադրսևորումը պետք է գտներ բազմաթիվ այլ մեթոդներով: Եվ քանի որ ոչնչացվել էր նախկին հասարակական արժեքների համակարգը, ուստի նրա նկատմամբ քննադատական ոգին մնաց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Նոր արժեքները պետք է ստեղծեին նրանք, ովքեր դեռ երբեք չէին ունեցել նման հնարավորություններ, առավել ևս փորձ: Ավելին նրանք չունեին իրավական գիտակցության ամբողջական պատկերացում: Արդյունքում ողջ համակարգը կառուցվեց զորանոցային կարգով: Իրականություն դարձավ Գ. Պլեխանովի վաղաժամ սոցիալիզմի կառուցման հետ կապված կանխատեսումը:

Արդարացնել կամ քննադատել այսպիսի մոտեցումը թերևս անիմաստ է: Պատմական զարգացումների նման սցենարը Ռուսաստանի համար տեղավորվում է օրինաչափության մեջ:

Ստալինը ստեղծեց անհատի պաշտանմունքը և դա միայն փառասիրություն չէր, այլ արժեքային վակուումը հասարակության մեջ փոխարինելու ձգտում: Այսպես, ցարի փոխարեն՝ «անհատի պաշտանմունք», արքունիքի փոխարեն՝ կուսակցական պլենում, ազնվականության փոխարեն՝ կուսակցական մասսաներ, գաղտնի խորհրդի փոխարեն՝ քաղբյուրո, իսկ կրոնի փոխարեն մարքս-լենինյան աթեիզմ և նոր խորհրդային մշակութային միջավայր:

Ստալինյան շրջանը իր արյունոտ ճանապարհին ամրագրեց ոչնչով չհիմնավորված կոլեկտիվացում, այնուհետև սեփական երկրի և իշխանության

անվտանգությունը ամրապնդման համար ինդուստրացումը, որը եզրափակվեց «կուլտուրական հեղափոխությամբ»: Իսկ իրականում սա միջոցառումների մի շարք էր, ուղղված մեկ նպատակին. ամեն կերպ օգտագործել մարդուն, զրկել առանձին անհատ քաղաքացուն արտահայտել մտքերը, որովհետև դրանք փոփոխությունների սկիզբն են:

Չժխտելով գիտատեխնիկական առաջընթացին ուղղված ոչ մի քայլ, պետք է այնուամենայնիվ արձանագրենք փաստը. բոլշևիկյան ռեժիմը ներքաղաքական հարաբերությունների ոլորտում չստեղծեց ոչ մի նոր բան, այլ ընդհամենը ընդօրինակեց ցարիզմի պետական ապարատի ողջ ֆունկցիաները՝ մասամբ մոդեռնիզացնելով դրանք: Եվ նույն օրինաչափությամբ սահմանափակվելով սեփական դոգմաների՝ կարծրացած սահմաններում, հայտնվեց «լճացման» մեջ, հեռանալով այն իրականությունից, որն օրեցօր հարվածում էր սեփական «իրավական համակարգի» հիմքերին: Արդյունքում օրակարգի հարց էր դառնում վերափոխել կարծրացած կառույցը: Սակայն «Վերակառուցումը» միայն հաստատեց նրա իրական մակարդակը: ԽՍՀՄ փլուզվեց ոչ միայն տնտեսական պակասի պատճառով, այլ որովհետև իր գոյության 70 տարիների ընթացքում այն ոչ թե լուծեց մինչ այդ եղած «ազգային» խնդիրները, այլ սառեցրեց կամ առժամանակ խեղդեց դրանք ամուր բռունցքի միջոցով: Այդ դեպքում բավարար է զսպող օղակը թուլանա, որպեսզի դրանք իրենց դրսևորումները գտնեն ավելի սուր ձևով: Կայսրության համար դա բազմագլուխ հիդրա էր: Այն չլուծվեց և չէր էլ կարող լուծվել, որովհետև ԽՍՀՄ –ի պետական ապարատի գենեզիսը բխում էր ցարիզմից, որը չէր լուծել այդ խնդիրները: Մեկ հանգամանք ևս, եթե ցարական Ռուսաստանի ժամանակ գոյություն ունեին ազգային ծայրամասեր, ապա Ռուսաստանի խորհրդայնացումից ԽՍՀՄ 70-ամյա գոյության ընթացքում ստեղծվել էին 15 հանրապետություններ սահմանափակ, բայց անվիճելի ներքին ինքնավարությամբ: Դրան գումարած ևս 3 տասնյակ ինքնավար շրջաններ:

Այսինքն, գիտատեխնիկական զարգացումը տեղերում բերեց նրանց ամրապնդմանն ու ինքնահաստատմանը, սակայն 1970-ական թթ-ից ընդհուպ մինչև փլուզումը լճացող կուսակցական վերնախավը աստիճանաբար կորցնում էր կապը իր հասարակական հենարանի հետ, որի պայմաններում հասարակության մեջ անշեղորեն պետք է մեծանար ազգայինը: Այս երևույթը կարելի է համեմատել Բրիտանական կայսրության գաղութների հետ. սկզբում դոմինիոնի, այնուհետև լիակատար անկախացմամբ:

1990-ական թվականները դա նոր զարգացումների շրջան է: Սակայն այստեղ ևս դրսևորվեց ժառանգականությունը բոլշևիկներից: Խոսքը 1993թ. Սպիտակ տան դեպքերի մասին է: Միառժամանակ 1990-ականները դարձան

քաղաքական բազմակուսակցության սկզբնավորման և ձևավորման բախտորոշ շրջան:

Ցավոք, թե Ռուսաստանը, թե ԽՍՀՄ մյուս հանրապետություններին սպասվում էր բոլոր առումներով ծանր և ցնցումներով լի մի փուլ, որը մենք կարող ենք անվանել հասարակական արժեքների վերագնահատման և փնտրտուքի շրջան: [1, c.25]

70 -ամյա իրականության մեջ դաստիարակված սերունդի համար սա դաժան հանգուցալուծում էր: Ճիշտ է ասված. «Չկա ավելի ծանր երևույթ, քան անցումային շրջանի սերունդ լինելը»: Իսկ 70 -ամյա ԽՍՀՄ –ն և առհասարակ XX դարը մի ամբողջ անցումային շրջան էր, լի «թռիչքային առաջընթացներով» ու արժեքների վերափոխումներով:

Պետական համակարգը ինչպես և հասարակությունը, մարդը դա կենդանի օրգանիզմ է, որը կարիք ունի նորմալ և դինամիկ զարգացման՝ համաձայն ժամանակի ոգուն [2]: Ռուսաստանի պարագայում գիտատեխնիկական զարգացումը շատ ավելի առաջ էր հասարակականից: Դա անհամաչափ զարգացում էր, որի հետևանքը իրեն զգացնել տվեցին 80-ական թվականներին, երբ արտաքին աշխարհի գիտական ներուժը գերազանցեց ԽՍՀՄ–ին: Սա իբրև մեջբերում համեմատելու համար հասարակական զարգացման տարբերությունները:

Փորձենք կատարել տրամաբանական հետևություններ՝

1. Հասարակական հարաբերությունների ոչ նորմալ զարգացումները ու դրա արդյունքում կուտակված խնդիրները օրինաչափորեն հող են նախապատրաստում ուժեղ սոցիալական ցնցումների ու կատակլիզմների համար: Ավելի կոնկրետ ասենք, որ XX դարի 90 -ական թվականները դարձավ Ռուսաստանի թռիչքային զարգացման փորձարկումների հանգուցակետը:

2. Շուրջ 70 տարիների փորձերը՝ կառուցել նոր հասարակարգ և պետական համակարգ կարծրացած գաղափարական հենքի վրա՝ տապալվեցին: Դա հետևանք էր այն բանի, որ բոլշևիկյան վերնախավը ուղղակի անտեսել էր հասարակական զարգացման բոլոր օրինաչափությունները՝ կարծելով, որ միայն մեկ կուսակցության գերիշխանությունը կապահովի սոցիալիզմի կառուցման նպաստավոր պայմանները: Դա ուներ երկու թույլ կողմ՝

ա) կենտրոնածիգ, բռնի օղակ,

բ) հասարակական առաջնայնությունների ընդունումը միայն սեփական բյուրոկրատական ձգտումներից:

Իսկ միայն բռնությամբ պահվող իշխանությունը՝ զուրկ հասարակական զանգվածների իրավագիտակցության գաղափարից, պետական ապարատին անշեղորեն զրկում է հողից, աստիճանաբար քչացնելով իշխանության

ռեսուրսներն ու լծակները: Եթե դրան ավելացնենք նաև ազգային հարցը, ապա արդյունքները պետք է շատ օրինաչափ համարել:

1990-ականներին դեմոկրատական վերափոխումների և քաղաքական նոր կուսակցությունների մրցավազքում պատմության զարգացումը շարժվեց հոկտեմբերից դեպի փետրվար: Եվ դա միայն կոմկուսի միանձնյա իշխանությունից հեռացումով չէր, որ արտահայտվեց, այլ պետական իշխանության և հասարակական ուժերի միջև եղած փոփոխություններով, որն ակնհայտ երևաց 1991թ. և 1993թ.-ին Սպիտակ տան արյունոտ դեպքերի հենքի վրա:

Նոր Ռուսաստանի համար բազմակուսակցական ինստիտուտի հիմնավորումը, 1990-93թթ. ժամանակահատվածում ուներ հետևյալ պատկերը: Ընդ որում այն ձևավորվել էր մինչև 1993թ. թեև ավելի շատ արտահայտում էր նախորդ իրավիճակի արտացոլումն ու փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքը: Այսպես 1992թ. դրությամբ Ժողովրդական Պատգամավորների Խորհուրդը (օրենսդիր մարմինը) բաժանված էր երեք խոշոր պատգամավորական խմբերի:

Առաջինը՝ «Ժողովրդական Ռուսաստան»/Дем. Россия/: Այդ միությունը, նրա անդամները անվերապահորեն աջակցում էին ՌԴ -ն նախագահին եւ վերափոխման քաղաքական կուրսի եռանդուն պաշտպաններն էին:

Երկրորդը՝ «Քաղաքացիական Միություն» 1992թ, որն օժանդակում էր նախագահին, վերափոխմանը՝ այդ թվում եւ տնտեսության շուկայացման գաղափարին, բայց դեմ էին առկա կառավարության վերափոխող խմբի տնտեսական ուղեգծին:

Երրորդը՝ «Ռուսաստանյան Միասնությունն» էր /Российское единство/, որը դեմ էր ինչպես նախագահ Ելցինին, այնպես էլ տնտեսական վերափոխումների կուրսին ընդհանրապես: Այսպիսի արմատական դիրքորոշումը պայմանավորված է միության մեջ բավական ուժեղ տեղ գտած ազգայնական եւ պահպանողական ուժերի առկայությամբ [3]: Իսկ 1993թ. դեպքերից հետո նախկին քաղաքական դաշտը վերադասավորվեց, ուր նորից իրեն զգացնել տվեց դարասկզբին տեղ գտած տրամաբանությունը:

Մենք դիտարկեցինք երկու քաղաքական իրականության օրինակ և որոնցից պարզ է դառնում մեկ աքսիոմ՝ Ռուսասանի հասարակական-քաղաքական կյանքի ներքին մակարդակը իր ուղղակի ազդեցությունն է ունենում հասարակական հարաբերություններում ձևավորվող խաղի կանոնների և քաղաքական համակարգի կազմավորման վրա: Նշվածը կախված չէ ժամանակի տևողությունից, քանի որ յուրաքանչյուր հասարակության ներքին կառուցվածքը ավելի դժվար է ենթարկվում այդ ազդեցությանը, եթե այն ունի ամբողջական ազգային եսի սերնդեսերունդ փոխանցվող գաղափար: Ռուսաստանի պարագայում ավելացնենք միայն, որ այդ երկրի ժողովրդի համար կայուն արժեքը

Պետական ապարատի իշխանությունն է, որը միահյուսված է մեծապետական, վելիկոռուս ազգի գաղափարի հետ [1, c. 26]:

/ԼԴՊՐ/ Ռ Լ Դ Կ	24%
/ԿՊՐՓ/ Ռ Դ Կ Կ	13%
/ԱՊՐ/ Ռ Ազդ Կ	11%
/Яблоко/ Յ ա բ լ ո կ ո	7,8%
/Женшини России/ Ռուսաստանի կանայք	7,8%
/Դ. Ռ. Ր/ Ռ Դ Կ	7,6%
/Դ. Ֆ. Ր/ Ռ Ժ Ը	15.4%
/Ռ. Ր. Ե. Ս./ Ռ Մ Հ Կ	7,6%

Սակայն 1993թ ելցինյան վարչակազմը ուներ մեկ այլ խնդիր, որը ուրվականի պես պետք է հետապնդեր նրանց ողջ 90-ականներին, իսկ դրա առանձին արձագանքները տեղ են գտնում մինչ օրս: Խոսքը անջատողական տրամադրությունների մասին է, որոնց տոն էին տալիս ինչպես Ռուսաստանի որոշ քաղաքական շրջաններ, այնպես էլ արտաքին աշխարհի մրցակից տերություններ: Վերջիններիս համար ակնհայտ էր, որ Ռուսաստանը իր դերակատարումով փոխարինել էր ԽՍՀՄ-ին: Այդ պայմաններում նրա հզորացումը ձեռնտու չէր: Թույլ Ռուսաստանը ավելի զիջող կլիներ տնտեսական փոխօգնության և համագործակցության հարցերում: Ուստի նրանք մեծապես օգտվեցին այս խնդրից Ռուսաստանի Դաշնության ղեկավար շրջաններին հարկի կամ անհարկի քննադատելով: Այս հարցի մասին խոսելուց մի պահ պետք է ետ դառնալ 1990թ, երբ ՌԽՖՍՀ նախագահի պաշտոնին հավակնող Բ. Ելցինը առաջադրեց Ռուսաստանի Դաշնության ազգային անկախության գաղափարը: Այս քայլը դարձավ անջատողականության այն սերմը, որի պատասխանատվության մեծ մասը Բ. Ելցինի ուսերին է: Ազգային անկախություն մի պետության համար, որն ինքն իրենից ներկայացնում է մի քանի տասնյակ ազգությունների դաշնություն: Համածայնվեք առաջադրված գաղափարը անգամ տեսական մակարդակով հիմք է տալիս բարդ հարցերի կծիկի համար, որի լուծումները նոր ղեկավարներից և ոչ մեկը 90-ականներին չուներ: Սակայն Ռուսաստանի համար իրավիճակը ողբերգական էր նաև նրանով, որ հարցը արդեն ստացել էր գործնական արձագանք հենց Դաշնության ներսում: Այս գործընթացը առաջինը հարվածեց պետական կառուցվածքին, որի պայմաններում վերացավ կոնկրետ իշխանության իրավասությունների սահմանը տեղերի և կենտրոնի միջև [1, c. 27-28]: Այստեղ վտանգավորը հասարակության ներքին տրոհումն էր, որի պայմաններում քաղաքական համակարգը չէր կարող ոչ միայն գործել, այլ անգամ ուրվագծվել, քանի որ բացակայում էր իշխանական հորիզոնի և արդեն ձևավորված շրջանների իրավական պարտավորությունների սահմանը:

Արդյունքում շարքային քաղաքացին գտնվում էր մի իրավիճակում, երբ ունի միայն պարտավորություններ, իսկ մի կողմից չկա մարմին, որը օրենքի մակարդակով ապահովվեր նրա իրավունքները: Դժվար է ասել թե այս վիճակն ում էր առավելապես ծեռնտու, սակայն պարզ է նաև, որ դրանից միակ տուժողը ՌԴ-ն քաղաքացին էր: Ավելին, ազգային ինքնավարության գաղափարը ուղղակի ոչնչացրեց այն իշխանական հորիզոնը, որը կերտվել էր խորհրդային իշխանության գալուստից ի վեր:

1993թ. ՌԴ Գերագույն Խորհրդի և նախագահի միջև ստեղծված հարաբերությունները մի կողմից արդյունք էին նախորդ տարիներին «Դեմոկրատների» կատարած քաղաքական սխալների ու վրիպումների, մյուս կողմից սահմանադրական, ավելի ճիշտ հրավական բացթողում էր, որը հնարավորություն տվեց առավել արմատական ընդդիմադիր ուժերին դրսևորել սեփական անգիջողականությունը, իսկ Բ. Ելցինին՝ իր թիմով հանդերձ, ցուցաբերել կամակորություն և ինքնահաստատում գտնել պառլամենտը արձակելու մեջ: Իսկ իրականությունը այսպիսին էր: ԽՍՀՄ փլուզումից հետո սոցիալ-տնտեսական իրավիճակը, որն առավել զգալի էր հասարակության մեջ, վերջիններիս նետեց առավել ծաղկուն կոմունիստական հասարակարգին վերադառնալու մտքին: Դժվար կլիներ ուրիշ բան սպասել նրանցից, քանի որ հասարակության զգալի հատվածը նախկին քաղաքական համակարգի արժեքների կրողն էր: Հետևաբար նրանց համար խորթ էին նաև նոր ձևավորվող հասարակական հարաբերությունների սկզբունքները, որը յուրաքանչյուր քաղաքացուն ընձեռում էր գործողությունների և ազատությունների առավելագույն չափ: Հասարակության զգալի մասը հոգեբանորեն պատրաստ չէր նման շրջադարձի [5, с.206.]:

Այստեղ իհարկե պետք է ընդունել, որ ոչ բոլորին տրվեցին հավասար հնարավորություններ: Դրա ապացույցն է «սեփականաշնորհում»-ը (приватизация) ու «վաուչերիզացիա»-ն: Առաջինը պետք է ապահովեր հանրային և պետական օբյեկտների մասնավորեցման, երկրորդը՝ քաղաքացիների միջև ըստ իրենց աշխատանքային և անձնական դերակատարության բաժնեմասերի ապահովվումը: Իսկ արդյունքում նրանց մեծ մասը ոչինչ չստացավ: Հետաքրքրական է, որ նմանատիպ սցենարի կրկնում կարող ենք արձանագրել այլ հանրապետություններում: Հեռու չգնալու համար կարող ենք օրինակ բերել Հայաստանի Հանրապետության սեփականաշնորհման դաշը փորձը արդյունաբերական օբյեկտներում:

Ներկայումս հաճախ են հնչում վերափոխումների վնասակար դերի մասին, անգամ նրանց հեղինակներին անվանելով դավաճաններ: Որոկավորումները այստեղ գրեթե անտեղին են: Ռուսաստանի Դաշնության նոր իշխանության ներկայացուցիչների զգալի մասը նախկին նոմենկլատուրայից է:

Ընդսմին դժվար է անգամ գտնել մի որևէ քաղաքական կուսակցության լիդերի, որն այս կամ այն կերպ գենետիկ արմատներ չի ունեցել կոմկուսի պլենումներից: Հենց այստեղ էլ պարփակված է այն ողբերգությունը, որը մի կողմից ամրագրում էր նախորդ վարչակազմի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական լճացումը և կրկնակի ապաշնորհ վերափոխումների փորձերը: Ուստի այս հենքի վրա 1993թ. իրադարձությունները պետք է դիտարկել իբրև օրինաչափ եզրափակում, քանի որ նոր տնտեսական հաղթանակներ վարչակազմը չարձանագրեց ընդհուպ մինչև 90-ականների ավարտը: Այստեղ ավելի կարևոր նոր ձևավորվող «Դուման» էր, որը մի կողմից արձանագրեց հասարակության մեջ քաղաքական ուժերից յուրաքանչյուրի վարկանիշը, մյուս կողմից ուղղակի ստիպեց երկուստեք իրենց հարցերի քննարկումը տեղափոխել պառլամենտ: Ձավեշտականը այն է, որ Բ. Ելցինը շրջանառության մեջ դրեց մի սահմանադրություն, որը թեև ավելացրեց նախագահի լիազորությունները, բայց հասարակական վարկանիշի հարցում ուղիղ համեմատական էր: Դա արտահայտվեց թե հերթական վերափոխումների տապալմամաբ, թե կաբինետի հաճախակի թարմացումներով, թե իր անձնական ներուժի արժեզրկմամբ: Իսկ քաղաքական լիդերի նման ընկալումը ցնցումներով լի պետության մեջ պետք է ունենա հստակ չափանիշներ և արժեքներ: Ռուսաստանի Դաշնությունում մնացել է ապարատ, պետական մեխանիզմ, որը չէր կարող հստակ տեղորոշեր նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը հասարակության մեջ:

Փորձագետների զգալի մասը հակված է Ռուսաստանի Դաշնության ժողովրդավարացումը կապել անհատների հետ: Այնինչ նրանք մոռանում են որ յուրաքանչյուր պատմական իրադարձություն, անկախ անհատի հատկանիշներից, որոշվում է մինչ այդ ստեղծված նպաստավոր պայմաններով: Այս պատմական օրինաչափությամբ է հիմնավորվում պատմական կամ քաղաքական անհատ-գործչի արժեքը [6, c. 229]: Ուստի անտեսել այդ նպաստավոր կամ անբարենպաստ պայմանները, կնշանակեր տուրք տալ պատեհապաշտությանը, իսկ նման մոտեցումը թույլ չի տալիս վեր հանել օբյեկտիվ իրականությունը: Քաղաքագիտության և պատմության ուսումնասիրման տարբերություններից մեկն այն է, որ առաջինը ավելի մեծ տեղ է տալիս անկանխատեսելիությանը [7, c.72], երկրորդը հենվում է օրինաչափություններից բխող տրամաբանության վրա, բայց երկու դեպքում էլ դիտարկման առարկան մնում է նույնը:

1993թ. Բ. Ելցինի, ըստ էության ապօրինի, միջամտությունը սահմանադրական կարգի հաստատմանը երկրում, ևս մեկ անգամ ապացուցեց գործելակերպի իր բուլշևիկյան ժառանգականությունը: Ինքը նախագահը իր հուշերում դա պատճառաբանում էր նրանով, որ համոզված էր ամեն գնով չպետք է թույլ տրվեր կոմունիստների վերադարձը քաղաքական իշխանության [8, c.33]:

Բ.Ելցինի երկյուղը քաղաքական իշխանության հարցում իհարկե ուներ հիմքեր, բայց դրա մեջ հենց ինքն էր մեղավոր: Ավելի կոնկրետ բացահայտելու համար իրական պատճառները, տեղին է անդրադառնալ տնտեսական վերափոխումներին, ավելի ճիշտ դրանց իրական մոտիվներին: 1991-93թթ. դրությամբ Ռուսաստանի Դաշնությունը հանդիսանում էր ԽՍՀՄ երկրներից արդյունաբերական ռեսուրսներով ամենահարուստը: Սակայն այդ գիգանտները պետական կամ ազգային սեփականություն էին: Դրան գումարած «Երկաթե վարագույրի» վերացումից հետո արտասահմանյան ապրանքները, այդ թվում և արդյունաբերական, ողողել էին երկրի ներքին շուկան, որոնց ցածր ինքնարժեքը անմրցունակ էր դարձնում հայրենական արտադրությունը: Շատ հաճախ հնչում են տնտեսական վերափոխումների աննախադեպության մասին տեսակետներ: Այս վարկածը միայն մասամբ կարելի է ընդունել, քանի որ հիմնական մեխը ազգայնացվածից դեպի ապապետականացման գործընթացն էր, որի փորձը առկա էր Ռուսաստանի Դաշնությունից դուրս: Այդ դեպքում հարց է ծագում, իսկ որն էր իրական պատճառը: Պատասխանը իրականում կարելի է տեսնել վերափոխումներից մինչև 90-ականների երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածի մեջ: Իրականում խնդիրը դրված էր այլ կերպ: Նոր իշխանություններին արդեն առաջին տարիներին ակնհայտ էր, որ սոցիալական ոլորտում նրանք ի վիճակի չեն լինի ապահովել սեփական խոստումները: Պարզ էր նաև, որ սոցիալական հենարանի հարցում քաղաքական նոր վարչակազմը ևս մտահոգվելու լուրջ հիմքեր ուներ: Հասարակության զգալի մաս կազմող ընտրողները, որոնց հետ նոր սկսվել էր ձևավորվել հասարակական հարաբերությունների փոխադարձ կապը, հիմնականում կազմում էին թոշակառուներ, մանկավարժներ, ածխահատներ, գործարանների աշխատողներ, որոնք ամենաառաջինն իրենց կաշվի վրա պետք է զգային սոցիալական ցնցումների դաժան փորձությունները: Դրանք հասարակության այն զանգվածն էին, որ մի կողմից դաստիարակված էին այլ արժեքներով, որը ենթադրում էր նախորդ հաստատված կանոններ, մյուս կողմից սոցիալական բարեկեցության չափանիշները նրանց մոտ ասոցացվում էր կոմկուսի հետ: Սակայն այս ամենին գումարվում էր նաև միջին և նոր աճող սերունդը, առաջինի համար անհրաժեշտ էր սոցիալ տնտեսական կայուն հենք սեփական ցանկությունները իրականացնելու համար, երկրորդի մոտ բացակայում էր որևէ չափանիշը:

Արդյունքում քաղաքական իշխանությունը հայտնվեց գործազուրկների և ընչազուրկների շրջապատում, որոնցից անիմաստ էր օժանդակություն ակնկալելը: Այս երկընտրանքի մեջ նոր վարչակազմին անհրաժեշտ էր ամեն գնով պահպանել սեփական իշխանությունը: Պարզ էր, որ նշված ժամանակահատվածում վերափոխումներ իրականացնել, որ կբերեր ցանկալի արդյունքի անհնար էր, և ամենակարևորն ինչո՞ւ, եթե կա ավելի հեշտ և էժան ճանապարհ:

Այդ ուղին հռչակավոր սեփականաշնորհումն ու բաժնետոմսավորումն էր, որը մեկ հարվածով գրկեց սոցիալական լայն շերտերին պահանջներ ներկայացնել իշխանությանը, իսկ այդ հենքի վրա հարստացած նոր ռուսաստանյան բուրժուազիան ավելի ցանկալի գործընկեր էր վարչակազմի համար: Իսկ եթե նկատի ունենանք, որ նրանց զգալի մասը պետական բարձրաստիճան պաշտոնյաներ կամ էլ դրանց հովհանավորությունը վայելող գործարարներ էին, ապա պարզ է դառնում, թե ում էր իրականում ձեռնտու մասնավորեցումը: Իշխանությունը ուղղակի մի կողմ նետեց կաշկանդող բալաստը: Այստեղից տրամաբանական հետևություն. հին քաղխորհրդին (որը նաև անլեգալ պայմաններում վարում էր մեծ տնտեսական գործունեություն) փոխարինելու եկավ լեգալ, օրենքով պաշտպանված բուրժուազիան, որը սերտաճել էր իշխանության հետ: Սա է վկայում ՌԴ պետական ապարատի 90-ականների սոցիալական-տնտեսական քաղաքականությունը: Սրանով կարող ենք եզրակացնել, որ քաղաքական համակարգը Ռուսաստանի Դաշնության պատմության այս շրջանում չկայացավ: Իշխանությունը առաջին անգամ շատ լուրջ անհանգստացավ 1995-96թթ., երբ առավել արմատական ծախ թևը սկսեց գրավել ընտրողների համակրանքը: Դրա ապացույցն էր 1996թ նախագահական ընտրություններում սկսված անհախադեպ ինֆորմացիոն քարոզչությունը, երբ հերթական անգամ խախտելով օրենքը Բ. Ելցինը վատ առողջական վիճակով ընտրվեց երկրորդ ժամկետով [8, c.50]: Ինքը հրավիճակը ստիպեց նաև վարչակազմին արմատապես փոխել վերաբերմունքը ընտրողների նկատմամբ, քանի որ ֆինանսական շրջանների նման միջամտությունը և շահագրգռվածությունը ևս անհանգստության տեղիք էին տալիս: Ներքին թուլությունը նաև անբարենպաստ հող տվեց արտաքին միջազգային հարաբերություններում ՌԴ ներքին հարցերի հրապարակ հանելու համար: Դա ակնհայտորեն օգտագործվում էր նաև որոշ քաղաքական գործիչների կողմից սեփական դիվիդենտների բարձրացման համար: Այստեղ միայն իշխանությունը հասկացավ, որ զուրկ է երկրի ներսում հասարակական հակակշռի մեխանիզմից: Մի բան, որ անհնար էր անլիարժեք քաղաքական համակարգ ունեցող պետության համար: Այստեղ խնդիրը վերաբերվում էր անմիջականորեն շարքային քաղաքացիներին, որոնք ունեին իրենց կենսական շահերն ու պահանջները: Ընդ որում դա վերաբերվում էր ոչ միայն սոցիալական ոլորտին, այլ առհասարակ պետության տեղին և դերին երկրի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Դրա ապացույցն էր նախագահի կողքին հավաքված այն փորցագետների քանակը, որոնց նպատակն էր բացահայտել այն բացթողումներն ու սխալները, որոնք կատարվել էին մինչ այդ: Բ. Ելցինը որոշեց կառավարական իր թիմը թարմացնել: Դա վերջին թարմացումը չէր, սակայն այդ քայլն արդեն հստակ պարզ դարձրեց իր հետագա ուղղվածությունը: Ընդհանուր գնահատելով 90-ականները, պետք է

չմոռանալ, որ Ռուսաստանի Դաշնության նախագահի մարտավարությունը երկրորդ ժամանակահատվածում փնտրտուքի շրջան էր: Ընդ որում այդ բառի բոլոր իմաստներով: Մի կողմից պետք էր ապահովել հաջորդ թեկնածուին, որ կկարողանար ընկալել նպատակներն ու դրդապատճառները, իսկ մյուս կողմից ճիշտ ընտրել հեռանալու պահը: Ինչո՞ւ, որովհետև Բ. Ելցինի համար ակնհայտ էր դարձել, որ իբրև անհատ նա սպառել է սեփական ներուժը, իսկ խոստացված վերափոխումները իր այդ թիմով և մեխանիզմներով նա ի վիճակի չէ իրականացնելու: 1999թ. Բ. Ելցինի Ամանորյա անակնկալը, պետք է դիտարկել իբրև քաղաքական համակարգի կայացումն արագացնելուն ուղղված քայլ, քանի որ դրանով նա մի կողմից անպետք բալաստի պես ցած նետեց իր քաղաքական հակառակորդների բոլոր ջանքերը, մյուս կողմից էլ զրկեց հողից նախկին մեխանիզմը, դրանով իսկ գործողությունների ազատություն տալով նորանշանակ վարչապետին և իր լիազորությունների ժամանակավոր պաշտոնակատարին: Դրա փայլուն վկայությունն են նախկին հավակնություններ ունեցող և լիբերալ ուժերի մոտեցման փոխվելը:

Պուտինյան վարչակազմի ամենաառաջին շոշափելի հաղթանակը սեփական տեղն ու դերը քաղաքական դաշտում տեղորոշելն էր, որը մեծապես կանխորոշեց նրա հաղթանակն ու գործողությունների ուղղվածությունը Վլ. Պուտինի նախագահության առաջին ժամկետում: «Օրենքի բռնապետություն» արտահայտությունը, որը նախագահի առաջին ելույթի առանցքային միտքն էր, ուղղակի ազդանշան էր այն բանի, որ պետությունը այսուհետև պարտավորվում է հավասար խաղի կանոններ հաստատել պետության ներքին հարաբերությունների ոլորտում: Դա արտահայտվեց թե մոնոպոլիստների և խոշոր գործարարներին հարկային դաշտի առջև կոշտ պարտադրմամբ, թե շուկայական տնտեսության մեջ միջին և մանր գործարարության խթանմամբ, թե ռազմավարական ձեռնարկությունների ղեկավարման մեջ պետության դերի ուժեղացմամբ, թե իրավապահ մարմինների պարտականությունների հստակ ամրագրմամբ, իսկ ռազմարդյունաբերական համալիրի դերը պետության ղեկավարման հարցում կտրուկ կրճատվեց՝ խիստ վերահսկողության տակ դնելով նաև նրանց բյուջետային ծախսերը: Այս քայլերը նպատակ ունեին քաղաքական ուժերին դեպի օրենսդիր մարմինը ձգելու համար: Այդ պայմաններում քաղաքական դաշտը դառնում է ավելի կանխատեսելի, որը անհրաժեշտ էր նոր վարչակազմին ապագա քայլերը անսխալ հաշվարկելու համար: Վարչակազմի գործնական քայլերը երևացին բյուջետային աշխատողներին և թոշակառուների նյութական բարելավվմանը ուղղված օրենքներում: Այնուահանդերձ, դա նպատակ ուներ մեծացնելու սոցիալական հենարանը և ամրապնդել պետական ապարատի նկատմամբ վստահությունը, որը մեծապես խաթարվել էր:

Երկրորդ վճռական քայլը արտաքին վարկերից հրաժարումն էր, փոխարենը երկրի տնտեսության զարգացման ու բարելավմանն ուղղված դիրքորոշումն էր: Պուտինի նախագահության առաջին և երկրորդ նախագահության ժամկետները տարբերվում են իրարից: Առաջինը ուղղված էր իրավիճակի ծանոթացմանն ու վերլուծությանը, իսկ երկրորդը ավելի կոնկրետ մշակված հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության շրջանառմամբ: Այստեղ թերևս կարևոր է նշել 2003թ. դումայական ընտրություններում «Միասնության» բացարձակ հաղթանակը, և դրանից հետո վարվող քաղաքական ուղղեգիծը, որը ակնհայտ է դարձնում այն միտքը, որ թե իշխանությունները, թե հասարակությունը ավելի շատ կենտրոնացած են դեպի քաղաքական համակարգի կայացմանը: Նման պայմաններում ավելի արդյունավետ է դառնում, թե հասարակության տարբեր շերտերի շահերի պաշտպանությունը, թե պետական մարմինների կողմից պարտականությունների կատարումը:

Նոր վարչակազմի կարևոր ուղղություններից մեկը անջատողականության դեմ տարվող պայքարն էր, որը դարձավ Ռուսաստանի Դաշնության տարածքային ամբողջականության ամրապնդմանն ուղղված վճռական միջոց: Ընդ որում գործը չսահմանափակվեց չեչենական գլխացավի նկատմամբ կոշտ միջոցառումների կիրառումով: Պետական ապարատ եկած նոր աշխատակազմը արագ հասկացավ հիմնական թերությունները ինչպես կառավարման, այնպես էլ օրենսդրական ոլորտում: Վարչական թերություններից մեկը բխում էր հենց «Սահմանադրական կարգի մասին» և «Օրենսդիր պալատի մասին» օրենքներից[3, c.40-41]: Այսպես ՌԴ պառլամետնի վերին պալատը կազմված էր նահանգապետներից: Սա ինքնին տարօրինակ էր, քանի որ տեղական ինքնակառավարման ղեկավարի ազդեցությունը օրենքների ընդունման գործընթացի վրա բխելու էր ոչ թե կոնկրետ ընտրողների շահերից, այլ ղեկավար անձանց ժամանակավոր շահերից: Եթե ընդունենք, որ սա մի փորձ էր տեղական նահանգներին կենտրոնացված պահել մայրաքաղաքում, պետք է ընդունել, որ երկիրը ևս շատ թանկ է վճարում: Իրավիճակը ստեղծվել էր 1993թ. իրադարձությունների թոհ ու բոհում, երբ Ժողովրդական Պատգամավորների Խորհուրդը իր ծեռքին եղած լծակներով խիստ սահմանափակել էր Ելցինյան վարչակազմի գործողությունները, իսկ օրենսդրական նախաձեռնությունները ուղղակի տապալել էր: Բ.Ելցինը որոշեց փոխել ուժերի հարաբերակցությունը: Սխալ կլիներ կարծել, որ նա չէր սպասում իր գործողությունների հակադարձ արդյունքները նախատեսվող ընտրություններում: Անհրաժեշտ էր ունենալ դաշնակից, ինչպիսին և դարձավ Սենատը, որոնց ներկայացուցիչները ունեին և օրենսդրական և կառավարման լծակներ: Դա լուծում էր իշխանությունը սեփական ծեռքում պահելու համար, բայց ժամանակի ընթացքում այն պետք է

դառնար երկրի դինամիկ զարգացման խոչընդոտ: Նոր վարչակազմը չէր կարող չհասկանալ այս երևույթի վնասակարության աստիճանը: Ուստի գտնվեց լուծման յուրահատուկ ձև, նախագահը նշանակեց իր լիազոր ներկայացուցիչներին, նրանց հսկողության տակ դնելով մի քանի նահանգներ, ընդհուպ մինչև իրավապահ մարմինների գործողությունների վերահսկողությունը: Քաղաքական դաշտում սա ընդունվեց իբրև կայսերական շրջանի վերադարձ: Գնահատականների համար կարծում ենք շատ վաղ է: Իսկ իրական անհանգստությունը բխում էր նախագահի ազդեցության կտրուկ մեծացումից, որը ցանկալի չէ ինչպես տեղական չինովնիկներին, այնպես էլ ընդդիմադիր կուսակցություններին:

Այս բացթողումը, որի հետևանքով մասամբ ստեղծվել էր իշխանական հորիզոնի թուլացում, ուստի և անվերահսկելիության մտնոլորտ, դա տեղական և դաշնային օրենքների անհամապատասխանությունն ու հակասություններն էին, սկսած բյուջետային աշխատողներին տրվող իրավական կարգավիճակից, վերջացրած թոշակառուների փոխհատուցման մեխանիզմներով: Այսինքն վարչակազմը առաջին անգամ գործնական քայլեր կատարեց իշխանական հորիզոնի վերականգնման համար և ոչ երկիմաստ դրա հիմքում դրեց իրավական բացթողման վերացումը: Սա ևս բխում էր նախագահի 2001թ «Օրենքի բռնապետություն» արտահայտությունից:

Քաղաքական համակարգի հավասարակշռությանը ուղղված քայլը, որը տեղ գտավ Ռուսաստանի Դաշնությունում, Սահմանադրական դատարանը Մոսկվայից Սանկտ-Պետորբուրգ տեղախոխելու որոշումն էր 2005թ դեկտեմբերին: Դրանով նոր վարչակազմը նպատակ ունի՝

1. չեզոքացնել մեկ տասնամյակում մայրաքաղաքում կենտրոնացած ֆինանսական խոշոր շրջանները;
2. Զրկել ուժային և պետական մարմիններին ազդեցության որևէ հնարավորությունից;
3. Գործողությունների ազատություն տալ Սահմնադրական Դատարանին իբրև առանձին պետական ինստիտուտ և հավասարակշռություն հաստատել երկրի դատա-իրավական համակարգում, որը քաղաքացիական հասարակության ձևավորման առաջին նախապայմաններից մեկն է:

Այս քայլը իրապես կարող է դառնալ իրական գործոն ՌԴ քաղաքական համակարգի լիարժեք կայացման համար, եթե նկատի ունենանք, որ բազմազգ տերության համար առաջին նախապայմանը սեփական քաղաքացիների իրավական պաշտպանվածությունն է:

Վերլուծելով իշխանական կուսակցության և ներկա վարչակազմի քայլերը քաղաքական համակարգի մեջ փոփոխություններ մտցնելու հարցում, պետք է նկատել, որ նրանք ավելի հակված են ամրապնդելու պետական

ապարատի դերը հասարակության կյանքում, որի առաջնահերթությունների մեջ պետք տեսնել իշխանական հորիզոնի հետագա ամրապնդումն ու վերահսկողության հետագա ուժեղացումը: Ուստի հետագա փոփոխությունները Ռուսաստանի Դաշնության քաղաքական համակարգում ընկած է եկող սերնդի ուսերին, որոնց վճռականությունը մեծապես կորոշի քաղաքական համակարգի ներսում կազմավորվող ուժերի հարաբերակցությունը: Մյուս կողմից, այն պետք է ունենա հստակ պատկերացում այն մասին, որ Ռուսաստանի Դաշնության ներսում դեռևս չի ձևավորվել քաղաքական էթնոսի գաղափարը[7, c. 74], տեղը զիջելով սոցիալ-ազգայնական տրամադրություններին, որի ապացույցը դումայական ընտրություններում լիբերալների ձայների կտրուկ նվազումն էր:

Եզրափակելով թեման նշենք, որ Ռուսաստանի Դաշնության այս զարգացումները ուղղակի կամ անուղղակի կերպով փոխկապակցված են ներկայիս ՍՊՀ երկրների զարգացման հեռանկարների հետ: Չմոռանանք, որ 70 տարին քիչ ժամկետ չէ, և այդ ընթացքում մեզ ժառանգություն մնացած շատ ավանդույթներ, լինեն դրանք ազգային, տնտեսական թե մշակութային, դեռ շարունակում են իրենց ազդեցությունը թողնել հասարակական-քաղաքական հարաբերություններում և Հայաստանի Հանրապետությունը դրանց մեջ բացառություն չէ:

Գրականություն

1. А. Мигранян, Россия в поисках идентичностьи, М. 1993,
2. Хропанюк, Теория государства и права,М .1996.
3. И. Гранкин, Парламент России. Ö. 1999.
4. М. Горшков, Россия на рубеже веков, Ö. 2000.
5. Д. Райгордский, Психология и психоанализ власти, Т 1, Т 2. М. 1999.
6. А. Панарин, Политология, М. 2000.
7. Б. Ельцин, Президентскй марафон, Ö.1999.
8. www.cir.ru (Фонд УИС Россия), М. 2005.